



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2021 թվականի N 653-Լ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հավանություն տալ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-912-29.03.2021-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

Երևան

«ՀԱՆՐԱՎՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-912-29.03.2021-ԳԿ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.1-ին կետով, համաձայն որի՝ առնվազն 2 անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին բավարարող անձի կողմից չհամալրվելու դեպքում, ուսուցչի տվյալ թափուր տեղի համար կարող է դիմել նաև տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված կազմակերպության (կազմակերպությունների), այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատության առաջարկած համապատասխան կրթական ծրագրին մասնակցության միջոցով մանկավարժության առնվազն երեսուն կրեդիտ ունեցող անձը:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ նախագծի ընդունման նպատակն է ուսուցչական կադրերի համալրման և մասնագետների ընտրության այլընտրանքային տարբերակի ներդրումը և որակյալ մրցակցություն ունենալու հնարավորության ստեղծումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցիչների բացակայությամբ պայմանավորված առարկաների դասավանդման անհնարիության արդյունքում խախտվում է երեխաների կրթության իրավունքը, և բացի այդ, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ոլորտը մարդկային ռեսուրսների երիտասարդացման կարիք ունի:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է.

1. 1-ին հոդվածում «26-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 1.1-րդ կետով» բառերը փոխարինել «26-րդ հոդվածը լրացնել 1.1-ին մասով» բառերով:

2. 1-ին հոդվածով լրացվող 1.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրմամբ՝

«1.1. Առնվազն 2 անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին բավարարող անձի կողմից չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար կարող է դիմել նաև համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) և սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված կազմակերպության (կազմակերպությունների), այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատության առաջարկած համապատասխան կրթական ծրագրին մասնակցության միջոցով մանկավարժության առնվազն երեսուն կրեդիտ ունեցող անձը»:

3. Նախագծի 2-րդ հոդվածն առաջարկում ենք հանել, քանի որ մանկավարժական կրեդիտները կուտակելու համար օրենքով սահմանված կրթական ծրագրում ընդգրկված լինելու հանգամանքը դեռ չի երաշխավորում, որ անձը պարտադիր հավաքելու է համապատասխան կրեդիտները, որը հիմք է տվյալ առարկայի մասնագիտական որակավորում ունեցող անձին ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

4. Առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր հոդվածով, որով կնախատեսվի փոփոխություն կատարել օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում՝ «ստաժ» բառից հետո լրացնելով «բացառությամբ սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերը:

Հայտնում ենք նաև, որ սույն օրենքի առաջարկվող փոփոխությունից հետո անհրաժեշտություն կառաջանա երկամսյա ժամկետում համապատասխան փոփոխություն կատարել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշման մեջ: